Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 31-ի N 418 - Լ որոշման

Կ Ա Ր Գ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են հրատապ դրամական աջակցություն նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները:

2. Հրատապ դրամական աջակցությունը նշանակվում է 2006 թվականի ապրիլի 1-ին կամ դրանից հետո ծնված երեխա խնամող ծնողին (ծնողներին), եթե 2020 թվականի մարտի 13-ից մինչև մարտի 25-ն ընկած ժամանակահատվածում՝

1) երեխայի երկու ծնողներն ազատվել են աշխատանքից (լուծվել է երեխայի երկու ծնողների հետ կնքված աշխատանքային պայմանագիրը), կամ.

2) երեխայի ծնողներից մեկն ազատվել է աշխատանքից (լուծվել է երեխայի ծնողներից մեկի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը), իսկ մյուս ծնողը 2020 թվականի մարտի 25-ի դրությամբ չի աշխատում, կամ զրկված է ծնողական իրավունքներից, կամ մահացած է, կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է մահացած կամ անհայտ կորած, կամ.

3) միայնակ մայրը կամ նրա հետ համատեղ բնակվող ծնողը (եթե երեխայի ծնողներն ամուսնալուծված են) ազատվել է աշխատանքից:

3. Հրատապ դրամական աջակցությունը չի նշանակվում, եթե՝

1) աշխատանքից ազատված ծնողի (սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ ծնողներից մեկի) համար 2020 թվականի հունվար և փետրվար ամիսներին հաշվարկված միջին ամսական աշխատավարձի չափը գերազանցել է 500 000 դրամը (միջին ամսական աշխատավարձի չափը հաշվարկվում է ծնողի համար հունվար և փետրվար ամիսներին հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների հանրագումարը երկուսի բաժանելու միջոցով).

2) ծնողը (սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ ծնողներից մեկը) 2020 թվականի մարտի 25-ի (ներառյալ) դրությամբ՝

ա. աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվել այլ գործատուի հետ կամ նույն գործատուի հետ՝ այլ աշխատանքային պայմանագրի հիման վրա, կամ

բ. հանդիսացել է անհատ ձեռնարկատեր և գործունեությունը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված կարգով դադարեցված չէ:

4. Հրատապ դրամական աջակցության չափը հաշվարկվում է 100 000 դրամի չափով 2006 թվականի ապրիլի 1-ին կամ դրանից հետո ծնված՝ ծնողի խնամքին գտնվող յուրաքանչյուր երեխայի համար՝ 100 000 դրամը բազմապատկելով այդ երեխաների թվով:

5. Հրատապ դրամական աջակցությունը նշանակում և վճարում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների հիման վրա:

6. Պետական եկամուտների կոմիտեն, հիմք ընդունելով «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա տվյալները և սույն կարգի 2-րդ ու 3-րդ կետերի դրույթները, ձևավորում է շահառուների ցանկ:

7. Շահառուների ցանկում ներառվում են՝

1) երեխայի հոր և մոր անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը,

2) սույն կարգի 2-րդ կետում նշված երեխայի (երեխաների) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը,

3) եթե երեխայի ծնողներից մեկը զրկված է ծնողական իրավունքներից, կամ մահացած է, կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է մահացած կամ անհայտ կորած, ապա նշում այդ մասին,

4) երեխայի ծնողներից մեկի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

8. Շահառուների ցանկը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգով էլեկտրոնային եղանակով տրամադրվում է Ծառայությանը:

9. Ծառայությունը Պետական եկամուտների կոմիտեից շահառուների ցանկը ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է վճարման ցուցակներ՝ ըստ բանկերի:

10. Վճարման ցուցակում ներառվում են՝

1) բանկի անվանումը,

2) երեխայի հոր և մոր անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, եթե նպաստը նշանակվել է սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա,

3) երեխայի ծնողի (միայնակ մոր) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, եթե նպաստը նշանակվել է սույն կարգի 2-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետի հիման վրա,

4) վճարման ենթակա գումարը:

11. Հրատապ դրամական աջակցությունը վճարվում է անկանխիկ եղանակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման N 3 հավելվածի 2-րդ կետի 1.1-ին ենթակետով երեխայի ծնողյան միանվագ նպաստը վճարելու համար սահմանված կարգով՝ այդ հավելվածի 18-րդ կետում նշված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքած բանկերի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ շահառուն ներկայացրել է Հրատապ դրամական աջակցությունը իր բանկային հաշվի համարին փոխանցելու միջոցով ստանալու դիմում: Դիմումը ներկայացվում է Ծառայության տարածքային բաժին կամ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կամ Ծառայություն: Ընդ որում, եթե Հրատապ դրամական աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում Հրատապ դրամական աջակցության գումարը ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

12. Եթե շահառուն ներկայացրել է Հրատապ դրամական աջակցությունն իր բանկային հաշվի համարին փոխանցելու միջոցով ստանալու դիմում, ապա գումարը փոխանցվում է շահառուի բանկային հաշվի համարին:

13. Վճարման ցուցակում բանկի ընտրությունը կատարվում է պատահականության սկզբունքով՝ բոլոր շահառուներին հավասարապես բաշխելով Համաձայնագիր կնքած բանկերի միջև, բացառությամբ այն դեպքի, երբ շահառուն սույն կարգի 11-րդ կետով նախատեսված կարգով ներկայացրել է գումարը Համաձայնագիր կնքած այլ բանկի միջոցով վճարելու դիմում:

14. Վճարման ցուցակը բանկին փոխանցելու օրվան հաջորդող օրը Ծառայությունն այդ մասին գրավոր տեղեկացնում է շահառուներին՝ էլեկտրոնային փոստին հաղորդագրություն ուղարկելու, իսկ էլեկտրոնային փոստի հասցեի

բացակայության դեպքում՝ գրավոր նամակը բնակչության պետական ռեգիստրում անձի հաշվառման վայրի հասցեով ուղարկելու միջոցով:

15. Հրատապ դրամական աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

16. Հրատապ դրամական աջակցության գումարը ընտանիքի անապահովությունը գնահատելիս ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չի մտնում, ինչպես նաև եկամտային հարկով հարկման բազայում չի ներառվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ